ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀՐԱՎԵՐԻ ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2025 թվականի մայիսի 12-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԾԱԾԿԱԳԻՐԸ «ՇՄՆ-ԳՀ-ԱՇՁԲ-25/06»

Շրջակա միջավայրի նախարարության կարիքների համար «ՀՀ Արարատի և Արմավիրի մարզերում խորքային հորերի լուծարման կամ կոնսերվացման աշխատանքների» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՇՄՆ-ԳՀ-ԱՇՁԲ-25/06» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 2025 թվականի մայիսի 9-ին ժամը 14:02:38-ին ստացված հարցադրումը և դրանց վերաբերյալ 2025 թվականի մայիսի 12-ին ժամը 09:30-ին տրամադրված պարզաբանումը՝

Հարցադրում N 1: Հարգելի հանձնաժողով, խնդրում են պարզաբանել, թե ինչ կարգի լիցենզիա և ինչ տիպի ներդիր է անհրաժեշտ տվյալ գնանշման հարցման հրավերին մասնակցելու համար:

Պարզաբանում N 1: Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 3-րդ մասը, ինչպես նաև «ՇՄՆ-ԳՀ-ԱՇՁԲ-25/06» ծածկագրով հրավերի 1-ին մասի 3-րդ բաժնի 3.3 կետը՝ հանձնաժողովը գտնում է, որ հարցումը դուրս է հրավերի բովանդակության շրջանակից և աշխատանքների իրականացման համար լիցենզիայի պահանջը կարգավորվում է «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով և գործունեության տեսակի համապատասխան լիցեզիան տրամադրող լիազոր մարմնի իրավական ակտերով:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ՇՄՆ-ԳՀ-ԱՇՁԲ-25/06» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ **Լ.Սարդարյանին:**

Հեռախոս՝ (011) 818 529:
Էլեկտրանային փոստ՝ gnumner@env.am:

«ՇՄՆ-ԳՀ-ԱՇՁԲ-25/06» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով